

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2021-3-2-Ա

ք. Երևան

28.04.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի ապրիլի 28-ի նիստում քննարկեց 2020 թվականի դեկտեմբերի 7-ին ներկայացուցիչ Լենա Մաթևոսյանի կողմից ներկայացված՝ «Ավենյու դե Փարիզ» ՍՊԸ (Երևան, Աբովյան 23/1, AM) ընկերության բողոքը «AVENUE DE PARIS CAFE & RESTAURANT 1995» (№20200240) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.  
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մականշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «AVENUE DE PARIS CAFE DE RESTAURANT 1995» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱԾՄԴ-ի 30-րդ և 43-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար գրանցման հիման վրա պահպանվող «Le Cafe de Paris», «Le Cafe Paris» («Փարիզյան սուրճ ֆակտորի» ՍՊԸ, Երևան, Ամիրյան 11 (AM), N-15754, 16.07.2010թ., N-19023, 02.11.2012թ., N-19040, 02.11.2012թ.), ինչպես նաև «AVENUE ԱՎԵՆՅՈՒ» («Ինտաս» ՍՊԸ, Երևան, Կիլյան 1-ին նրբ., 3-րդ շենք, բն. 12 (AM), N -20113, 09.07.2013թ.) ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119.1,2-րդ, 120.1,2-րդ, 121-րդ, 122-րդ, 124.1-րդ, 130.1,2-րդ և 132-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվել դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Տվյալ դեպքում, չնայած առանձին՝ ոչ էական տարբերությունների առկայությանը, համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են իրենց հիմնական և առաջնային ընկալման

տարրեր հանդիսացող «AVENUE», «Paris» և «de Paris» բառերով, որոնք ունեն իմաստային նմանություն, որը որոշվում է նշանների մեջ դրված նման հասկացությամբ, գաղափարով և նշանների համընկնող իմաստով և որոնց վրա էլ ընկնում է հիմնական տրամաբանական շեշտադրումը: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և Կարգի 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ «Փարիզյան սուրճ» ՍՊԸ-ի կողմից օգտագործվող «Le Café de Paris» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է <http://www.lecafede-paris.am/hy/home> և <https://www.facebook.com/lecafede-parisarmenia/> ինտերնետային կայքերում, որի մասին հայտատուն կարող էր իմանալ: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված՝ ՀՀ Պետական ռեգիստրի հիմնապաշարից քաղվածքին, ըստ որի՝ «Փարիզյան սուրճ (դուստր ձեռնարկություն)» կազմակերպությունը գրանցված է եղել 1995 թվականին, ապա այն չի կարող բավարար հիմք հանդիսանալ հայտարկված նիշը գրանցելու համար, քանի որ ներկայացված քաղվածքը չի ապացուցում «Փարիզյան սուրճ (դուստր ձեռնարկություն)» կազմակերպության և հայտատուի՝ «Ավենյու դե Փարիզ» ՍՊԸ-ի միջև իրավահաջորդության փաստը, ինչպես նաև չի ապացուցում, որ «AVENUE DE PARIS CAFE DE RESTAURANT» անունով սրճարանը (կամ ռեստորանը) գործել է 1995 թվականից:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված «AVENUE DE PARIS CAFE DE RESTAURANT 1995» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱԾՄԴ-ի 30-րդ և 43-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար գրանցման հիման վրա պահպանվող «Le Cafe de Paris», «Le Cafe Paris» («Փարիզյան սուրճ ֆակտորի» ՍՊԸ, Երևան, Ամիրյան 11 (AM), N-15754, 16.07.2010թ., N-19023, 02.11.2012թ., N-19040, 02.11.2012թ.), ինչպես նաև «AVENUE ԱՎԵՆՅՈՒ» («Ինտաս» ՍՊԸ, Երևան, Կիկյան 1-ին նրբ., 3-րդ շենք, բն. 12 (AM), N -20113, 09.07.2013թ.) ապրանքային նշաններին: Ինչպես նաև հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես

ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ «Փարիզյան սուրճ» ՍՊԸ-ի կողմից օգտագործվող «Le Café de Paris» ապրանքային նշանի նկատմամբ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել ներկայացուցիչ Լենա Մաթևոսյանի կողմից ներկայացված՝ «AVENUE DE PARIS CAFE & RESTAURANT 1995» (No20200240) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ